

**ԿԱՆԱԶ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ
(EaP GREEN) ԾՐԱԳՐԻ ՄԱԿ ԱԶԿ ՌԱՄՍ ԲԱՂԱԴՐԻՉ
ՌԱՄՍ ԿԱՆԱԶ ԱԿՈՒՄԲՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(2016-2017թթ. փորձը)**

ԿԱՆԱԶ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՌՈՏ - Տեղեկատվական թերթիկ 2, Հունիս 2017

«Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն» ցուցադրական ծրագիրը Արևելյան գործընկերության 6 երկրներում իրականացվող (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա) «Կանաչ տնտեսություններ Արևելյան հարևանության տարածաշրջանում» ծրագրի երեք բաղադրիչներից մեկն է, որի գլխավոր նպատակն է շարժվել դեպի կանաչ տնտեսություն՝ տարանջատելով տնտեսական աճը շրջակա միջավայրի դեգրադացիայից և ռեսուրսների սպառումից: Հայաստանում «Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն» ցուցադրական ծրագրի իրականացման ընթացքում օգտագործվում են ստուգված կանխարգելիչ բնապահպանական և արտադրողականության բարձրացման այնպիսի մոտեցումներ, որոնք բացահայտում են ռեսուրսների բարելավված արտադրողականության եռակի առավելությունները (նվազեցված արտադրողական ծախսեր և նյութերի, էներգիայի ու ջրի օգտագործում), նվազեցված բնապահպանական ազդեցությունը (ավելի քիչ թափոններ, արտանետումներ և աղտոտում) և բարելավված հանրային առողջությունն ու անվտանգությունը:



«Կանաչ ակումբի» աշխատանքային զրքույկ: ՓՄՁ-ների կողմից այն օգտագործվում է որպես սեփական հնարավորությունների և օգտագործվող ռեսուրսների փաստագրման և գնահատման միջոց:

«Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն» ծրագրի գլխավոր նպատակն է՝ Արևելյան գործընկերության երկրներում՝ ներառյալ Հայաստանում, բարելավել թիրախային արդյունաբերական ոլորտների ՓՄՁ-ների բնապահպանական գործունեությունը և ռեսուրսների արդյունավետությունը՝ դրանով իսկ


նպաստելով կայուն արդյունաբերական զարգացմանը և զբաղվածության ու եկամուտների մակարդակի բարձրացմանը՝ մասնավորապես գյուղատնտեսական /սննդի, քիմիական և շինարարական նյութերի արտադրության ոլորտներում: Ծրագրի «Կանաչ ակումբների» հիմնում բաղադրիչը նպատակ ունի իրականացնելու արտադրական նպատակներով տարբեր տեսակի նյութական և էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործման, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության հնարավորինս լայնածավալ գնահատում՝ ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու և ավելի մաքուր արտադրության գաղափարախոսությունը ներդնելու համար: Համայնքների և ՄԱԿ-ի ԱԶԿ/ԿՏԲԿ Հայաստանյան գրասենյակի համատեղ գործունեության ընթացքում ծրագրի փորձագետները ՀՀ ընտրված քաղաքներում և հարակից համայնքներում գործող բիզնես կազմակերպությունների համար կազմակերպել են դասընթացներ «Ռեսուրսների արդյունավետության և առավել մաքուր արտադրության» կազմակերպման հնարավորությունների գնահատման վերաբերյալ: Ծրագրի այս բաղադրիչի շրջանակներում Հայաստանի Արարատ, Դիլիջան, Հրազդան և Վանաձոր քաղաքներում ստորագրվել են համաձայնագրեր տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ, ինչպես նաև իրականացվել է «Կանաչ ակումբներ»-ի անդամ շուրջ 30 փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության նախնական գնահատում:

2015-16թթ. Հայաստանում հիմնված չորս Կանաչ աղուբներում ընդգրկված են թվով 31 փոքր և միջին ձեռնարկություններ, որոնք հիմնականում ներկայացնում են սննդի՝ 16, շինանյութերի՝ 7, քիմիական նյութերի՝ 8՝ արտադրություն: Բոլոր ՓՄՁ-ներ կատարված այցերի ընթացքում իրականացվել են արագ գնահատման մեթոդաբանությամբ առկա հիմնախնդիրների բացահայտում և լուծման ուղիների նախանշում: Բոլոր առաջարկները քննարկվել են կազմակերպությունների ղեկավարների և աշխատակիցների հետ: Առաջարկների հիման վրա սկսվել են ձեռնարկությունների համար գործողությունների պլանների մշակման աշխատանքները:



1. "Արարատ Աբրիկոն" ՍՊԸ - ալկոհոլային խմիչքներ
2. "Արամե & Սոֆի" ՍՊԸ - կաթնամթերք
3. "Արարատ Ճանշին" - ճանապարհաշինություն
4. "Մաթոս Սուքիասյան" ԱԶ - տնային պարագաներ
5. "Կավաշեն" - շինանյութ
6. "ԳԱԲԱ" ՍՊԸ - հացաթխում
7. "Մաքսիմելլա" ՍՊԸ - շինանյութ
8. "Արմինաշող" ՍՊԸ - հացաթխում

ՌԱՄԱ արագ գնահատում - "Արարատ Աբրիկոն" ՍՊԸ
Իրականացման համար առաջարկված հիմնական տարբերակները

	Իրականացման համար առաջարկված հիմնական տարբերակները	Օգուտներ				
		Տնտեսական			Ռեսուրսների օգտագործում	Բնապահպանական ազդեցություն
		Ներդրում	Ծախսերի կրճատում	Հետվճար		
		Դրամ	Դրամ/տարի	Տարի		
	Նյութերի ընտրություն և արդյունավետ օգտագործում	5,000,000	Արտադրողականության աճ	4 - 6	Նյութերի վերամշակում, օգտակար կողմնարդյունք	Թափոնային նյութերի կրճատում ավելի քան 50 (տոննա տարեկան)
	Թափոնների կրճատում և անվտանգ օգտագործում					
	Էներգետիկ աղբյուրների ընտրություն և արդյունավետ օգտագործում	13,200,000	1,800,000	6 - 8	Էներգիայի և նյութերի օգտագործման կրճատում, սարքավորումների մոդիֆիկացում	CO ₂ գազի արտանետումների 17.5 տոննա կրճատում CO ₂ (տարեկան)
	Արտանետումների վերահսկում և կրճատում					
	Ջրային ռեսուրսների ընտրություն և արդյունավետ օգտագործում	400,000	Կազմակերպչական արդյունավետություն	2 - 3	Ջրի և նյութերի օգտագործման կրճատում	Մառեցման գործընթացից արտահոսող կեղտաջուրն օգտագործվում է ռոռզման նպատակով
	Կեղտաջրերի նվազեցում և մաքրում					

ԴԻԼԻՋԱՆԻ «Կանաչ ակումբի» մասնակից կազմակերպություններ

1. “Լիլիթ Ադամայան” ԱԶ – հացաթխում
2. “Լևոն Ավագյան” ԱԶ - կղմինդր
3. “Դիլիջան” հյուրանոցային համալիր
4. “Վիլյա Ռեստ” ՍՊԸ – հյուրանոցային ծառայություններ
5. “Դիլիջան” ՍՊԸ - հանքային ջրերի գործարան
6. “ՔարԱրտ” ՓԲԸ - շինանյութ
7. “Դիլի” ՍՊԸ – կաթնամթերք/մացարելլա պանիր



ՌԱՄՄ արագ գնահատումներ “Լևոն Ավագյան” ԱԶ Իրականացվելիք ՌԱՄՄ առաջարկված միջոցառումները

1. Անխուսափելի թափոնների վաճառք կամ վերաօգտագործում որպես շինանյութ (մեծ տրամաչափի ավազ), օգտակար կողմնարդյունք:
2. Սպառողական տարածաշրջանային շուկայի մանրամասն ուսումնասիրում և արտադրողականության բարձրացում:
3. Սարքավորումների փոփոխության միջոցով արտադրողականության բարձրացում՝ ավելի մեծ շուկա գրավելու համար:
4. Օդափոխման համակարգի վերազինում՝ արտադրական գործընթացում առաջացող փոշին նվազագույնի հասցնելու նպատակով:
5. Էլեկտրաշարժիչների փոխարինում համապատասխան հզորության և ավելի բարձր արդյունավետություն ունեցող շարժիչներով:
6. Շիկացման լամպերի փոխարինում արդյունավետ լուսավորմամբ լամպերով (ԼԴ լամպեր):
7. Շինության արտաքին պատերի ջերմամեկուսացում՝ արտաքին պատեր (պեռլիտե սալիկներ), վերնահարկ պեռլիտե ծածկոցներ (150 մմ հաստությամբ և 0.065 Վտ / մ² C գործակցով ջերմահաղորդականությամբ):
8. 30% ապակեշերտերի (նույնիսկ տեղ-տեղ բացակայող) փոխարինում մեկուսացված պատերով:
9. Դռների և պատուհանների փոխարինում ավելի էներգաարդյունավետ դռներով և պատուհաններով [R-ի արժեքը մինչև 0.4 (մ² C)/ Վտ] արտաքին 70% երեսպատման փոխարեն:
10. Արևային ջրատաքացուցիչների տեղադրում (կոլեկցիոներների) շենքի տանիքի վրա, որով հնարավոր կլինի ստանալ տաք ջուր՝ ներքին և արտադրական կարիքները հոգալու համար:

ՃՐԱԶԴԱՆԻ «Կանաչ ակումբի» մասնակից կազմակերպություններ

1. “Գարիկ Փիլիպոսյան” ԱԶ - կաշվե իրեր/վաճառասրահ
2. “Բուսահակ Մելքոնյան” ԱԶ - գորգագործություն
3. “Արտյոմ Հովհաննիսյան” ԱԶ - հացաթխում
4. “Անդրանիկ Միրզոյան” ԱԶ - հացաթխում
5. “Ռոլանդ և Մասուն” ՍՊԸ - հացաթխում
6. “Լիլիթ Ղուկասյան” ԱԶ - Հրուշակեղեն
7. “Վանակատ” ԱԶ – պլաստիկ և այլումինե սարքավորումներ
8. “Գարեգին Գևորգյան ԱԶ”- քիմիական նյութեր



ՌԱՄՄ արագ գնահատում - “Սոնայ” ՍՊԸ՝ ՌԱՄՄ առաջարկված միջոցառումները

1. Բոլոր տեսակի կաշվե թափոնների վերամշակում՝ մաքրված կաշի, կոշիկների ներքնի երեսվածքներ, կաշվի փոշի, և այլն, պետք է պահեստավորվի և օգտագործվի որպես կաշվի ստվարաթուղթ, փաթեթավորման միջոց, մեկուսիչ, ինչպես նաև պարարտանյութերի արտադրության մեջ, այն նաև խորհուրդ է տրվում վաճառել կաշվի վերամշակման կազմակերպություններին:
2. Սարքավորումների մոդիֆիկացում, հնամաշ հիմնական արտադրական սարքավորումների վերանորոգում:

- Ներքին և արտաքին անարդյունավետ լուսավորման համակարգերի փոխարինում ԼԴ լամպերով: 50 եվրո ներդրում, տարեկան 300 ԿՎտժ խնայողություններ կամ 26 եվրո, CO₂ գազի տարեկան կրճատում 130 կգ-ով, հետվճարման ժամանակահատված՝ 1,9 տարի:
- Չորացման սարքավորումների փոխարինում, էլեկտրական չորացման համակարգի փոխարինում բնական գազով աշխատող չորացման սարքավորումով: 100 եվրո ներդրում, տարեկան 500 կՎժ խնայողություն կամ 45 եվրո, տարեկան CO₂ կրճատումներ 220 կգ-ով, հետվճարման ժամանակահատված՝ 2.2 տարի:
- Պատուհանների փոխարինում էներգաարդյունավետ պատուհաններով:
- Մետաղական արտաքին դարպասների ջերմամեկուսացում՝ տեղական արտադրության միկրո մանրաթելային գորգորի միջոցով՝ 50 մմ հաստությամբ:
- Տաքացման համար էլեկտրականության օգտագործման փոխարինում բնական գազով:
- 1 ԿՎտժ ֆոտոէլեկտրական պանելների տեղադրում շինության տանիքի վրա: Ներդրում՝ 1300 եվրո, տարեկան խնայողություններ՝ 1,500 ԿՎտժ (փաստացի տարեկան սպառման 100%-ը) կամ 135 եվրո, տարեկան 0.7 տոննա CO₂ – ի կրճատում, հետվճարման ժամանակահատված՝ 9.6 տարի:

ՎԱՆԱՉՈՐԻ «Կանաչ ակումբի» մասնակից կազմակերպություններ

1. “ՌոզՏուդ” ՄՊԸ-հյուրեր, կոմպոտներ, աղծուներ
2. “Անաշարդ” ՄՊԸ – սառը սուրճ/թեյ
3. “Մարտին Թովմասյան” ԱԶ-շինանյութ/սալիկներ
4. “Լուիզա Նարանդյան” ԱԶ – գետնանուշի վերամշակում
5. “Վահե Թովմասյան” ԱԶ- փայտե և կերամիկական իրեր
6. “Լիլիթ Սինդոյան” ԱԶ - արծաթագործություն
7. “Լուսինե Բարաթյան” ՄՊԸ- կիսաֆակրիկատների
8. “Մեղրատուն” ՄՊԸ – մեղր և մեղրից խմիչքներ



ՕՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ



Նունե Հարությունյան
Ծրագրի ազգային
համակարգող



Տիգրան Օգանիսյան
Ծրագրի ազգային թիմի
ղեկավար



Դեյուշուի Սահակյան
Ծրագրի փորձագետ



Տիգրան Մելիկյան
Ծրագրի փորձագետ



Թամարա Հակոբյան
Ծրագրի օգնական

Միացեք մեզ, ու մենք միասին կնվազեցնենք շրջակա միջավայրի սպառնալիքները և ռիսկերը: Կիրառեք «Ավելի լավ, ավելի էժան, ավելի արագ» սկզբունքը մեզ հետ և մեր օգնությամբ՝ դարձնելով փոքր և միջին ձեռներեցության գործունեության միջավայրն առավել հաջողակ ու գրավիչ:

Հետադարձ կապ. ՄԱԿ-ի ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԱՄՄ ծրագիրը
ԿՏԲԿ Հայաստանի ազգային գրասենյակ
Հասցե՝ Այգեստան 7 փ., տուն 2, 0010, Երևան, Հայաստան
Հեռ./Ֆաքս +374 11 574743 / 575148



EaP GREEN ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: EaP GREEN ծրագրի շրջանակներում ՌԱՄՄ ցուցադրական ծրագրի իրականացումը հնարավոր դարձավ Սյուլենիայի կառավարության, Ավստրիայի զարգացման բանկի և ՄԱԿ-ի համաֆինանսավորման շնորհիվ: Տպագրությունում արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտահայտեն Եվրոպական հանձնաժողովի կամ Միավորված ազգերի կազմակերպության արդյունաբերական զարգացման ծրագրի տեսակետները:



ՀՀ բնապահպանության նախարարությունը ծրագրի առաջատար գործընկերն է և համակարգում է Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության երկրներում ՌԱՄՄ ցուցադրական բաղադրիչի իրականացումը Հայաստանում:



«Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն» ցուցադրական ծրագիրը իրականացվել է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան գրասենյակի համագործակցությամբ: